

Հայաստանի Օրհուս կենտրոնների 2011թ. առաջին կիսամյակի կատարած աշխատանքների  
հաշվետվություն

2011թ. Հայաստանի Օրհուս կենտրոնների թիվը համալրվել է 1-ով: Արարատի մարզի Արարատ քաղաքում բացվել է թվով 15-րդ Օրհուս կենտրոնը, որն իր աշխատանքային գործունեությունն սկսել է փետրվարի 21-ից: Հրազդանի և Իջևանի Օրհուս կենտրոններում մրցույթային կարգով աշխատանքի են ընդունվել նոր աշխատակիցներ և Իջևանի կենտրոնը իր 2011թ. գործունեությունը սկսել է փետրվարի 9-ից, իսկ Հրազդանի կենտրոնը՝ փետրվարի 14-ից, մնացած 12 Օրհուս կենտրոնները՝ հունվարի 11-ից:

Կենտրոնների համակարգողների կողմից կազմվել են գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերը, որոնք քննարկվել և հաստատվել են կենտրոնների փորձագետների խորհուրդների կողմից: ՕԿ-ների աշխատանքային ծրագրերը կազմվում են հաշվի առնելով մարզի էկոլոգիական հիմնախնդիրները և համահունչ են մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման և համայնքների զարգացման ծրագրերում նախատեսված բնապահպանական միջոցառումների ծրագրերին: ՕԿ-ների աշխատանքային ծրագրերում ներառվել են նաև կենտրոնների փորձագետների խորհրդի անդամների առաջարկները՝ սովյալ մարզի գերակա էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ: ՕԿ-ների աշխատանքները կազմակերպվում են համաձայն տարեկան աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով Փոխըմբռման հուշագիրը և կենտրոնի կանոնակարգը, ինչպես նաև ՕԿ-ների ռազմավարական գործողությունների պլանի (2009-14) իրագործման համար մշակված ճանապարհային քարտեզը:

2011թ. ՕԿ-ների աշխատանքային ծրագրերը կազմվել են հետևյալ սկզբունքով.՝ գերակա խնդիրների ուղղությամբ համապատասխան պատասխանատու կառույցներին հարցումներով տեղեկատվության հավաքագրում, շահագրգիռ կողմերի իրազեկում և ներգրավում, խնդիրների լուծման ուղղությամբ համապատասխան մարմիններին առաջարկների ներկայացում: Ծրագրերը ներառում են նաև այլ աշխատանքներ:

*ՕԿ-ներն իրազեկում են հասարակությանը գլոբալ, տարածաշրջանային, տեղական էկոլոգիական հիմնախնդիրների մասին և նպաստում են վերջիններիս ներգրավմանը որոշումների ընդունման գործընթացին:*

Կենտրոնները իրականացնում են էկոլոգիական տեղեկատվության հավաքագրում, բազայավորում, տրամադրում ըստ պահանջի և տարածում շահագրգիռ կողմերի միջև՝ նպաստելով էկոլոգիական տեղեկատվության հասանելիությանը: Տեղեկատվությունը հասարակայնությանը առավել մատչելի դարձնելու նպատակով կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, էկոկրթության և էկոդաստիարակության մակարդակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ, մամլո ասուլիսներ, շնորհանդեսներ, գործնական աշխատանքներ (ծառատունկ, տարածքի մաքրում և այլն), միջազգային էկոլոգիական օրերի նշում և այլն:

ՕԿ-ները հանդիսանալով կապող օղակ պետական և ոչ պետական կառույցների միջև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող խնդիրների շուրջ կազմակերպում են կլոր սեղաններ, հանրային քննարկումներ և այլ նմանատիպ այլ միջոցառումներ՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ և մասնակցությամբ, ինչը նպաստում է շրջակա միջավայրի հարցերի կառավարման բարելավման գործընթացին, խթանելով թափանցիկությունը և ժողովրդավարությունը:


ՕԿ-ները շահագրգիռ հասարակությանը տեղեկացնում են շրջակա միջավայրի հարցերի շուրջ նորմատիվ իրավական նախագծերի և էկոլոգիական փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ կայանալիք հասարակական լսումների մասին (հնարավորության դեպքում նախագծին նախապես ծանոթանալու հնարավորություն է ընձեռնվում) և աջակցում են լիազոր մարմնին հասարակական լսումների կազմակերպմանը՝ նպաստելով հանրության մասնակցությանը շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների կայացման գործընթացին:

2011թ. առաջին կիսամյակի ընթացքում կենտրոնների նախաձեռնությամբ վերոնշյալ ուղղություններով իրականացվել են հետևյալ միջոցառումները.


Կենտրոն	Սեմինարներ (դասընթացներ, էկոլրթ. միջ.,էկ. օրեր, իրազեկման սեմինար՝ այդ թվում արդ. մատչ. սեմինարներ) թիվ/մասն. քանակ	Կլոր սեղան- քննարկումներ  (հանրային քննարկումներ, մամլո ասուլիսներ) թիվ/մասն. քանակ	Հասարակակ ան լուսններ  թիվ/մասն. քանակ	Աշխատանքային հանդիպումներ  թիվ	Փորձագետների խորհրդի նիստեր  թիվ/մասն. քանակ	Բնապահպանական ակցիաներ (ծառատունկ, տարածքի մաքրում և այլն)  թիվ/մասն. քանակ	Ընդամենը  միջոցառումն./ մասնակիցներ
Երևան	19/994	7/305	1(մասն. և աջակց.)	20	1/7	3/170	30/1476
Գավառ	7/3179	3/51	4/79	15	1/19	2/150	17/3478
Գյումրի	7/208	9/243	1/39	7	1/9	-	18/499
Գորիս	34/1593	4/61	-	7	2/15	2/75	47/1744
Դիլիջան	20/645	4/118	-	8	1/8	-	25/771
Իջևան	17/249	2/34	-	7	2/15	1/47	22/345
Կապան	27/526	10/204	-	7	2/18	1/47	40/795
Հրազդան	17/370	31/110	2/40	5	2/30	4/250	56/800
Վանաձոր	30/434	8/98	-	3	2/15	1/3	41/550
Եղեգնաձոր	18/310	4/37	-	12	2/32	5/36	29/415
Եղվարդ	20/328	6/160	-	12	2/16	3/344	31/848

Ապարան	9/347	6/67	-	4	1/8	4/70	20/492
Ստեփանավան	28/321	2/59	-	2	2/15	6/125	36/520
Ալավերդի	17/435	1/27	1/29	16	1/10	1/31	21/532
Արարատ	32/745	6/150	1/30	15	1/14	1/550	41/ 1489
Ընդամենը	302/10684	93/1724	10/217	140	23/231	34/ 1398	<b>418/14254</b>

Իրականացված միջոցառումներն (ըստ կենտրոնների և ընդամենը)



Միջոցառումների մասնակիցների թիվը (ըստ կենտրոնների և ընդամենը)



2011թ. հունվար-հունիս ամիսներին ՕԿ-ների նախաձեռնությամբ և աջակցությամբ տեղի են ունեցել 302 իրազեկման սեմինար և էկոկրթական միջոցառումներ, 103 կլոր սեղան- քննարկումներ, 10 հանրային լսումներ, 34 բնապահպանական ակցիաներ, 140 աշխատանքային հանդիպումներ : Հանրային քննարկումների արդյունքում տվյալ հիմնախնդրի լուծման ուղղությամբ առաջարկներ են ներկայացվում համապատասխան մարմիններին:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի 15 Օրհուս կենտրոնների նախաձեռնությամբ և աջակցությամբ տեղի են ունեցել ընդհանուր թվով 474 միջոցառում, որոնց մասնակցել են 14254:

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ աճել է միջոցառումների թիվը (418/9520): Եթե հաշվի առնենք, որ կենտրոնների քանակը 1-ով ավելացել է, այնուամենայնիվ աճ նկատվում է: 2010թ. համեմատ էկոկրթական միջոցառումների և իրազեկման սեմինարների թիվը համարյա նույն քանակի են, փոխարենը աճել է կլոր-սեղան քննարկումների, 2010 Իկիս.-55-ի փոխարեն, 2011 I կիս. 103 հանրային քննարկում: Հետևաբար աճել է նաև հանրային քննարկումների մասնակիցների թիվը, որը վկայում է այն մասին, որ հասարակության ավելի լայն շրջանակ է ընդգրկվում էկոլոգիական խնդիրների քննարկման գործընթացին:

ՕԿ-ները համարվում են ռեսուրս կենտրոններ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնների այցելուների թիվը կազմել է 4427, որոնց 75%-ը օգտվել են ծառայություններից, իսկ 25%-ը տեղեկատվություն, խորհրդատվություն ստանալու և այլ հարցերով: Այցելուների խմբերը տարբեր կենտրոններում տարբեր տոկոսային հարաբերություններով են, սակայն գերակշռող մասը բոլոր կենտրոններում կազմում են պատանիները և երիտասարդները և ՀԿ սեկտորի ներկայացուցիչները, նախորդ տարիների համեմատ զգալիորեն ավելացել է շահագրգիռ քաղաքացիների թիվը: 2010թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է նաև այցելուների թիվը` 3752-ից 4427: Ըստ ոլորտների ներկայացուցիչների տոկոսային հարաբերությունը դարձյալ նույնն է:

Հաշվետու ժամանակահատվածում ՕԿ-ների ծառայություններից օգտվողների թիվը ըստ կենտրոնների և ծառայությունների տեսակների.`

Կենտրոն	Գրադարան	Ֆիլմադարան	Տպիչ, պատճենահան	ինտերնետ, հեռ. ֆաքս	Տեղեկատվություն և խորհրդատվություն	Ընդամենը ծառ. մատուցում	Տարածքի տրամադրում
Երևան	87	53	303	190	207	840	20
Գավառ	37	14	20	35	102	208	
Գյումրի	76	67	118	113	173	547	
Գորիս	32	23	68	72	11	206	
Դիլիջան	43	23	72	103	4	245	3
Իջևան	29	17	40	47	12	145	
Կապան	34	35	204	25	54	352	
Հրազդան	8	2	26	19	71	126	
Վանաձոր	40	37	70	51	21	219	
Եղեգնաձոր	35	15	17	30	12	109	2
Եղվարդ	13	5	37	226	132	413	6
Ապարան	17	16	28	24	8	93	4
Ստեփանավան	48	27	120	64	34	293	4





Հաշվետու ժամանակահատվածում Երևանի Օրհուս կենտրոնում տեղի է ունեցել ՕԿ-ների համակարգողների 3 աշխատանքային հանդիպում, որոնց ընթացքում հիմնականում հստակեցվել են գործունեությունների ուղղությունները, քննարկվել են տարեկան աշխատանքային պլանների ձևաչափերը և այլ կազմակերպչական հարցեր: Նշված հանդիպումներին մասնակցել և ՕԿ-ների համակարգողներին կենտրոնների գործունեությունների ակտիվացման, շրջակա միջավայրի պահպանմանը հասարակության ներգրավման և քաղաքացիական հասարակության ստեղծմանը նպաստելու հարցերի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն են տվել անկախ փորձագետներ, էկոլոգիական հասարակական դաշինքի անդամները և երիտասարդ էկոակտիվիստները: Նշված հանդիպումներին մասնակցել է նաև կենտրոնների իրավախորհրդատուն և տրամադրել է խորհրդատվություն տեղերում առաջացած վիճելի հարցերի, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ: Իրավախորհրդատուն 6 ամիսների ընթացքում աջակցել է կենտրոններին իրավական հարցերում: Նշված աշխատանքային հանդիպումների ընթացքում Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի ներկայացուցիչների հետ (CDPF) քննարկվել են նաև ՕԿ-ների հետագա գործունեությունը՝ կայունության և զարգացման հարցերը, մասնավորապես՝ ՕԿ-ների իրավական կարգավիճակ ստանալու հարցը:

Օրհուս կենտրոնները աջակցություն են ստանում ԵԱՀԿ երեւանյան գրասենյակից, որը հոգում է ոչ միայն աշխատակիցների աշխատավարձը, այլև աջակցում է վերջիններիս մասնագիտական որակավորման հարցերում: ԵԱՀԿ աջակցությամբ համակարգողները մասնակցում են տարբեր սեմինարների և ուսուցողական դասընթացների, որոնց միջոցով վերազինում են իրենց գիտելիքները և աշխատանքային հմտությունները:

Հունիսի 14-16-ը ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի(UNDP) աջակցությամբ ՕԿ-ների համակարգողները մասնակցեցին GIZ (Գերմանիայի զարգացման համագործակցություն) կազմակերպության «Տարածաշրջանային Էկոլոգիական քաղաքականությունը Հարավային Կովկասում» (2009-2011թթ.) ծրագրի շրջանակներում՝ տեղի կազմակերպված սեմինար-դասընթացին:

ՄԱԶՕ/ԳԷՀ «Տեղեկատվության և մոնիտորինգի համակարգի օպտիմալացման նպատակով ինստիտուցիոնալ և իրավական ներուժի զարգացում Հայաստանում՝ գլոբալ բնապահպանական կառավարման համար» ծրագրի շրջանակներում ապրիլի 27-ին Երևանի Օրհուս կենտրոնում կազմակերպվեց սեմինար-դասընթաց Հայաստանի ՕԿ-ների համար: ՕԿ-ների ներկայացուցիչները վերազինեցին իրենց գիտելիքները՝ ՀՀ շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կառավարման համակարգերի, դրանց ներկա վիճակի և զարգացման հեռանկարների, Էկոլոգիական տեղեկատվության վերաբերյալ հասարակական պահանջարկի, ինչպես նաև շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվության հասանելիության մասին:

Մարտի 2-3-ը «Հեռանկարների փոխանակում աղետների նվազեցման վերաբերյալ» թեմայով Երևանում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում, որին մասնակցեցին նաև Հայաստանի Օրհուս կենտրոնների ներկայացուցիչները: Հանդիպումը կազմակերպել էր Կովկասի տարածաշրջանային Էկոլոգիական կենտրոնը Արտակարգ իրավիճակների նախարարության, ՄԱԶՕ ԱՌՆ ծրագրի և Օքսֆամ ՄԲ Մարդասիրական օգնության ծրագրի աջակցությամբ: Համայնքներում առկա աղետների ռիսկերի և դրանց հնարավոր վերացման քայլերի վերաբերյալ ելույթներ ունեցան Դիլիջանի, Գորիսի և Արարատի Օրհուս կենտրոնների համակարգողները: Հանդիպման ընթացքում մասնակիցների կողմից կարևորվեց Օրհուս կենտրոնների դերը աղետների կանխարգելման ուղղությամբ հասարակության իրազեկության մակարդակի բարձրացման առումով:

Նշված սեմինար-դասընթացները ոչ միայն գիտելիքների ձեռք բերման, այլ նաև միջազգային և ազգային փորձագետների հետ շփման, կազմակերպչական հմտությունների ձեռք բերման, միմյանց և այլ կազմակերպությունների հետ շփման և համագործակցության հարմար առիթ են հանդիսանում:

ՕԿ-ները ակտիվ համագործակցում են ՏԻՄ-երի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող միջազգային, պետական և ոչ պետական կառույցների, գիտական, բիզնես և ԶԼՄ սեկտորի ներկայացուցիչների հետ: Կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, կենտրոնների համակարգողները մասնակցում են այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև տրամադրում են տարածք և կազմակերպչական հարցերով աջակցում են այլ կազմակերպությունների կողմից կենտրոններում իրականացվող միջոցառումներին: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնները տրամադրել են տարածք 56 անգամ և մասնակցել են այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումներին:

ՕԿ-ները էլ. և սոցիալական ցանցերով մշտական շփման մեջ են վերոնշյալ կազմակերպությունների և միմյանց հետ: Facebook սոցիալական ցանցում ձևավորվել

Է «Հայաստանի Օրհուս կենտրոններ» խումբը, որն ընդգրկում է բոլոր ՕԿ-ների ներկայացուցիչներին և կենտրոնների հետ տեղեկատվության փոխանակման առումով անմիջական կապի մեջ գտնվող մի շարք կազմակերպությունների անդամներին: Ցանցը նպաստում է կենտրոնների գործունեության լուսաբանմանը, կենտրոնների միմյանց միջև և ավելի լայն ոլորտների հետ հաղորդակցմանը, փորձի փոխանակմանը, տեղեկատվության ձեռքբերմանը, կենտրոնների գովազդին (ճանաչելիությանը): Տեղեկատվությունը փոխանակման և տարածման աղբյուր են հանդիսանում [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքը և ՕԿ-ների էլեկտրոնային ցանցը:

Հաշվետու ժամանակահատվածում փոփոխվել է նաև կայքի բովանդակությունը և դիզայնը:

Մշակվում և տարբեր էլ. ցանցերով տարածվում է Օրհուս կենտրոնների էլեկտրոնային թերթը, որտեղ ներկայացվում են կենտրոններում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, կենտրոնների կողմից իրականացված առավել աչքի ընկնող միջոցառումները: Հաշվետու ժամանակահատվածում տարածվել է 2 (հունվար-փետրվար և մարտ-ապրիլ) պարբերական, իսկ երրորդը՝ (մայիս-հունիս) պատրաստ կլիմի հուլիսի սկզբին:

Օրհուս կենտրոնների դերը կարևորվում է որպես կամուրջ տեղական հասարակական կազմակերպությունների ու իշխանությունների միջև, որպես բնապահպանական քաղաքականության դեսպաններ, ժողովրդավարության կղզակներ:

Կենտրոնները գործունեություն են ծավալում տվյալ մարզին բնորոշ գերակա էկոլոգիական խնդիրների լուծման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում մի շարք թեժ էկոլոգիական հիմնախնդիրներ եղել են ՕԿ-ների ուշադրության կենտրոնում, իրականացվել է հանրության իրազեկում և կազմակերպվել են հանրային քննարկումներ այդ հիմնախնդիրների վերաբերյալ և առաջարկներ են ներկայացվել համապատասխան օղակներին:

**Հրազդանի** ՕԿ-ն տեղի ՀԿ-ների և հասարակության աջակցությամբ պայքար է ծավալել Հրազդանի երկաթահանքի շահագործման դեմ, կազմակերպվել են բողոքի ակցիաներ, քննարկումներ, հանդիպումներ: Տեղեկատվությունը տարածվել է հանրապետական և տեղական շուրջ 20 լրատվամիջոցներով: Խնդրի վերաբերյալ կենտրոնի անմիջական մասնակցությամբ տեղի է ունեցել շուրջ 29 մամլո ասուլիս: Հիմնախնդիրը քննարկման փուլում է:

Ոչ պակաս մտահոգիչ խնդիր է նաև «Շահումյանի ոսկու բազմամետաղային հանքավայրի բաց շահագործման խնդիրը, որը մշտապես **Կասպանի** ՕԿ-ի ուշադրության կենտրոնում է: Կենտրոնի դերը մեծ է հանքի բաց եղանակով հնարավոր շահագործման հետևանքների վերաբերյալ հանրությանը ճիշտ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև նրանց մտահոգությունների և դիրքորոշումների արտահայտման հնարավորություն ընձեռնման գործում:

Բացի Շահումյանի հանքավայրից Սյունիքը հարուստ է այլ հանքավայրերով և պոչամբարներով, որոնք աղետալի հետևանք են թողնում շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա:

Հանքավայրերով և թափոնավայրերով հաջորդ հարուստ մարզը Լոռին է: ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի մասնագետների կողմից ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ՔԳԱՇՄ) Փոքր դրամաշնորհային «ՀՀ գյուղմթերքների ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ գյուղմթերքները աղտոտված են ծանր մետաղներով, ինչը ևս մեկ ապացույց է հանքարդյունաբերության աղետալի հետևանքների վերաբերյալ: Նշված հետազոտության արդյունքների վերաբերյալ հանրային քննարկումներ են կազմակերպվել **Այսվերդու** և **Երևանի** ՕԿ-ներում:

**Գավառի** ՕԿ-ն կենտրոնը Սոթքի ոսկու հանքավայրում ապօրինաբար կառուցվող ջարդիչ տեսակավորող համալիրի հետ կապված կազմակերպել է հարային քննարկում Սոթքի համայնքապետարանում, որին մասնակցել են բոլոր շահագրգիռ կողմերը, բացի հանքը շահագործող ընկերությունից: Բնակիչներին պարզաբանումներ, համապատասխան տեղեկատվություն տալուց հետո կազմվել է հայտարարություն՝ մասնակիցների և գյուղի բնակիչների ստորագրություններով, ուղղված համապատասխան պատկան մարմիններին:

Կարևորագույն գերակա խնդիրներից է նաև անտառների պահպանության խնդիրները և այս ուղղությամբ **Դիլիջանի** ՕԿ-ն համագործակցելով Դիլիջան Ազգային պարկի և կլիմայի փոփոխության կոնվենցիայի ազգային համակարգողի հետ, կազմակերպել է Ազգային պարկի 2010 թ. գործունեության հաշվետվության ներկայացումը և անտառների վրա գազի գնի թանկացման հնարավոր հետևանքների և դրանց հաղթահարման ու կլիմայի ազդեցության մասին հանրային քննարկում: Արդյունքում կազմվել է առաջարկությունների փաթեթ անտառների պահպանման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու ողղությամբ:

Տավուշի անտառների պահպանության ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվում նաև **Իջևանի** ՕԿ-ի կողմից

**Դիլիջանի** ՕԿ-ն հանդիսացել է հարթակ բնակչության, համայնքի ղեկավարության և ջրամատակարար ընկերության միջև՝ ջրի սակագնի անհիմն բարձրացման և ջրի որակի հետ կապված ծագած վիճելի հարցի լուծման համար և հարցը դրական լուծում է ստացել, իջեցվել է սակագինը ջրի վատ որակի պատճառով:

Կանաչ գոտիների պահպանության խնդիրը նույնպես գերակա խնդիրների ցանկում է և Եղեգնաձոր քաղաքի գլխավոր հատակագծի վերաբերյալ, համաձայն որի պետք է վերակառուցվի քաղաքի կենտրոնի հրապարակը և այդ պատճառով պետք է հատվեն Մոմիկի այգու ծառերի կեսից ավելին, **Եղեգնաձորի** ՕԿ-ի նախաձեռնությամբ

դիմումներ են հղվել Եղեգնաձորի քաղաքապետին և ՀՀ կառավարությանը՝ շինարարական աշխատանքները ժամանակավորապես դադարեցնելու և հնարավորության դեպքում փոփոխված հատակագիծ ներկայացնելու նպատակով:

**Գյումրու** ՕԿ-ի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ աշխատանքներ են տարվել Գյումրու Վարդանանց հրապարակի եւ Արագած ճեմափողոցի խաչմերուկում՝ կանաչ տարածքի հաշվին անօրինական շինության կասեցման ուղղությամբ: Մա առաջընթաց քայլ էր ՏԻՄ-ի և հասարակական կառույցների փոխհարաբերություններում, քանի որ հանրությունը ներգրավվեց որոշումների կայացման ամենավաղ փուլում, երբ հնարավորություն կար մասնակցել ու ազդել վերջնական որոշման վրա:

Արդյունքում պատրաստվեց Գյումրու հասարակության հայտարարությունը, որն ուղղվեց երկրի ամենաբարձր ղեկավարությանը և ոլորտի լիազոր մարմիններին և շինարարությունը կասեցվեց:

ՀՀ Շիրակի մարզպետարանի և **Գյումրու** ՕԿ-ի համատեղ դիմելու արդյունքում, Գյումրիում կայացավ հանրային լսում «Հայաստանի նոր միջուկային էներգաբլոկի բնապահպանական հաշվետվության» վերաբերյալ: Նախատեսվում է այս նախաձեռնության վերաբերյալ Գյումրու ՀԿ-ների անունից ներկայացնել հատուկ կարծիք: Նոր էներգաբլոկի կառուցման խնդիրը քննարկվել է նաև **Երևանի** ՕԿ-ում և առաջարկ է ներկայացվել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը և բնապահպանության նախարարությանը Երևան քաղաքում ևս հասարակական լսումներ կազմակերպելու հարցով: Առաջիկա ամիսներին Երևան քաղաքում կիրականացվեն դրանք:

**Գյումրու** ՕԿ-ն աչքի է ընկնում նաև միջազգային հանդիպումների մասնակցությամբ: Հաշվետու ժամանակահատվածում համակարգողը մասնակցել է Օրհուսի համաձայնագրի Արդարադատության մատչելիության վերաբերյալ Նպատակային խմբի 4-րդ հանդիպմանը և Օրհուսի համաձայնագրի Կողմերի աշխատանքային խմբերի 13-րդ նիստին:

Երևան քաղաքի կարևորագույն էկոլոգիական խնդիրներից մեկն է ջրային օբյեկտների աղտոտվածության խնդիրները, որոնք հետևանք են կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերի: Խնդրի առնչությամբ **Երևանի** ՕԿ-ի կողմից առաջարկների փաթեթ է ուղարկվել Երևանի քաղաքապետարան:

**Եղվարդի** ՕԿ-ն բարձրացրել է Նաիրիի տարածքի գերակա հիմնախնդիր համարվող՝ խմելու ջրի մատակարարման ու որակի հարցերը, այս կապակցությամբ տեղեկատվություն ստանալու խնդրանքով դիմել է «Երևան ջուր» ՓԲԸ-ին՝ չստանալով ոչ մի պատասխան: **Եղվարդի** ՕԿ-ն մեծ աշխատանքներ է տանում նաև քաղաքացիական հասարակության կայացման նպատման ուղղությամբ՝

ներգրավելով հասարակությանը, մասնավորապես՝ երիտասարդությանը շրջակա միջավայրի պահպանության գործընթացին:

Ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրները քննարկվել են նաև **Գորիսի** ՕԿ-ում:

Աղբահանության խնդիրները նույնպես համարվում են կարևոր էկոլոգիական հիմահիւնդիրներից մեկը և այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում գրեթե բոլոր ՕԿ-ներում:

Լոռու մարզում իրականացվում է թափոնների կառավարման բարելավման ծրագիր, որին մասնակցում է նաև **Վանաձորի** Օրհուս կենտրոնը, մասնավորապես թափոնների տեղադրման վայրերի գույքագրման աշխատանքներին:

**Ալավերդու** ՕԿ-ն Ալավերդու քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպել են հանրային լսում՝ Նոր թափոնակուտակիչի կառուցման նահագծի վերաբերյալ: Արդյունքում մասնակիցները հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

**Ապարանի** ՕԿ-ն Արագածոտնի տարածաշրջանի Նիգավան համայնքի աղբահանության խնդիրների քննարկման արդյունքում առաջարկ է ուղղվել Ապարանի քաղաքապետին և խնդրով զբաղվող համապատասխան կառույցներին՝ սանիտարական նորմերին և ստանդարտներին համապատասխան աղբավայրի ու նրան կից աղբամշակման գործարանի կառուցման վերաբերյալ:

Կոտայքի մարզում նախատեսվում է կառուցել կենցաղային աղբի պոլիգոն, որի նախագծի հասարակական լսումների կազմակերպմանը աջակցել է և լսումներին մասնակցել է **Հրազդանի ՕԿ-ն**:

Էկոլոգիության և էկոդաստիրակության ուղղությամբ բոլոր ՕԿ-ներում ակտիվ աշխատանքներ են տարվում: Այս ուղղությամբ կատարված աշխատանքներից հարկ է նշել **Ստեփանավանի** ՕԿ-ի նախաձեռնությամբ և մի շարք ՕԿ-ների կողմից իրականացված «Օգնություն ճապոնիային» թղթե կոունկների պատրաստման նախաձեռնության մասին, որը լայն արձագանք ստացավ և հանրակրթական շատ հաստատություններ միացան այդ նախաձեռնությանը:

«Արարատի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինում նախագծի վերաբերյալ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՓԲԸ-ն ՀՀ **Արարատի** Օրհուս կենտրոնում, կենտրոնի աջակցությամբ կազմակերպեց «Արարատի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինում» աշխատանքային նախագծի վերաբերյալ հասարակական լսումներ: **Արարատի** ՕԿ-ն հանդիսացավ քննարկման հարթակ հասարակության, պետական կառույցների և բիզնես սեկտորի միջև՝ աջակցելով հասարակությանը մասնակից դառնալու որոշումների ընդունման գործընթացին:

Գործունեության 6 ամիսների ընթացքում հզորացվել է ՕԿ-ների տեղեկատվական բազան: Տեղեկատվություն ստանալու հարցումներով դիմել են ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություններ, ՀՀ վերահսկիչ պալատ, ՏԻՄ-եր և այլ գերատեսչություններ:

ՕԿ-ների կողմից առաջարկներ են եղել նաև նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ: ՀՀ Ազգային ժողով առաջարկ է ներկայացվել «ՀՀ ջրային օրենսգրքի մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ և ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ ««Շրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենսգրքի նախագծի հայեցակարգային մոտեցումներ» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծի վերաբերյալ:

ՕԿ-ների գործունեությունը խթանում է կամավորության գաղափարի տարածմանը: Կենտրոնների աշխատանքներում մշտապես ներգրավվում են կամավորներ:

Կենտրոնների գործունեությունը լուսաբանվել են հանրապետական և տեղական մի շարք ՀՐ-երով, ինչպես նաև մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներում (ավելի քան 500 հոդված): Կենտրոնների համակարգողները հրավիրվել են շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հեռուստա-ռադիո հաղորդումների: Հանրային ռադիոն անվճար եթեր է հեռարձակում ՕԿ-ների հայտարարությունները: 2011թ.-ին նախորդ տարիների համեմատ նկատվում է ՋԼՄ-ների հետ համագործակցության զգալի աճ:

Կենտրոնների կողմից 2011թ. առաջին կիսամյակին կատարած աշխատանքների ամփոփ հաշվետվությունները տեղադրված են կենտրոնների կայք էջերում ([www.aarhus.am](http://www.aarhus.am) կայք, “Օրհուս կենտրոններ”, “Կենտրոնի գործունեություն”):